

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

— Ասկէ առաջ մէկ ժամուան մէջ 200 հազարամետր (km.) արագութեամբ գնացող ելեկտրական կառախմբի մը պատրաստութեան ձեռնարկուած էր Բերլինի մէջ : Այժմ կը լսենք թէ շատ յաջող արդիւնքներ ձեռք բերուած են եւ քիչ ժամանակէն հասարակութեան տրամադրութեան տակ պիտի գրուի յիշեալ կառախումբը :

— Ծովային երկաթուղի մը հաստատած են Քալիֆորնիայի Ոքլանդ քաղքին նաւահանգստին մէջ, ծովէն դէպի եզերք երկարած, այն նպատակով՝ որ կարենան նորոգութեան համար դիւրութեամբ ցամաք հանել նաւերը :

— Ընդծովեայ նաւարկութեան գաղափարը նոր չէ, այլ կը հասնի մինչեւ 1620 թուականը, — առանց նկատողութեան առնելու Մեծն Աղեքսանդրի կատարած փորձը, Տիւրոսի պաշարման ժամանակ (332 Քրիստոսէ առաջ) : Անկէ ի վեր բազմաթիւ եւ բազմատեսակ նաւերու շինութեան ձեռնարկած, փորձեր կատարած եւ վերջապէս յաջողած են ծովի տակէն քալեցնելու նաւերը : Այժմ ~~Առաջնորդ~~ ^{Ընդծովեայ} մէջ պատրաստելու վերայ են 25 մետր երկայնութեամբ ընդծովեայ նաւ մը, որով կարելի պիտի լինի 60 մետր խորութեան տակ քալեցնել :

— Առատամիզութիւն (diabète) ունեցող հիւանդներու վրայ փորձեր կատարուելով հաստատուած է, որ երեք չորրորդ մասը գետնախնձորի ալիւրով խառն պատրաստուած հացը ոչ միայն անվնաս է այլ եւ օգտակար իսկ :

— Խլիրդի (cancer) բուժման մասին դանիացի բժիշկ պրոֆ. Հովից-ի փորձերը կատարեալ արդիւնաւոր եղած են, այնպէս որ պրոֆ. Հովից բազմաթիւ խլիրդներ բժշկած եւ արդիւնքն հաղորդած է գիտնական կաճառներու :

— Կը լսենք թէ Գ. Պոլսի հայ վարդապետներէն մին ձեռնարկած է գրական ճոխ աշխատութեան մը, որուն արդիւնքը պիտի յատկացուի Կիլիկիայի որբերուն :

— Բոստոնի (Ամերիկա) հայ գաղութէն պ. Մկրտիչ Պօյաճեան յաջող քննութենէ մը յետոյ՝ դեղագործութեան վկայական ստացեր է նոյն քաղքին Համալսարանէն :

— Դոկտ. Ա. Գարագաշ, որ իրեն մասնագիտութիւն ընտրած է կանանց հիւանդութիւնները եւ մասնաւորապէս ծննդաբերութիւնը, վերստին հաստատուած է Պարիս, 36 Rue de Clignancourt.

— Դոկտ. Պ. Բօլօլեան, որուն յաջողութիւնները միշտ հրճուանքով կարդացած ենք, Պարիսի Բժշկական կաճառէն երկրորդ անգամն ըլլալով վարձատրուած է վերջերս :